ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՆՎԱԶԵՑՎԵԼ Է

21.02.2018 19:18

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 20.02.2018թ. թիվ 4/9-Լ որոշմամբ «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման մեջ կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ ***խորհրդի որոշմամբ նշված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի անդամավճարի չափը սահմանվել է 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին գրավոր դիմելու պահից:***

Հաշվի առնելով խորհրդի վերոնշյալ որոշումը՝ բոլոր այն փաստաբանները, ովքեր հաշվառված են (մշտապես կամ առավելապես ապրում են) և հիմնական գործունեությունն իրականացնում են որոշման հավելվածով նշված բնակավայրերում, կարող են դիմել ՀՀ փաստաբանների պալատին՝ իրենց ամսական անդամավճարի չափն այսուհետ 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ սահմանելու մասին դիմումով:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշումը.

** Որոշման վերջին ինկորպորացիան՝ 20.08.2018թ. դրությամբ*

Բեռնել սահմանամերձ համայնքների ցանկը սահմանող ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման հավելվածը.

Բեռնել անդամավճարի ամսական չափը 2.000 ՀՀ դրամ սահմանելու մասին դիմումի ձևաթուղթը.

Առաջարկվող նորություններ

02.04.2016ԿԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })